«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների եւ հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝<<Ինտեգրված պարապմունքների կազմակերպում կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում>>

Դաստիարակ՝Փիրուզա Ասրյան
Մանկապարտեզ՝«Սիսիանի թիվ 2» ՀՈԱԿ,Դարբասի գործող խումբ

2023թ.

Բովանդակություն

1.Ներածություն.....3
2.Գլուխ 1.....4
3.Գլուխ 1.1.....5
4.Գլուխ 1.2.....5
5..Գլուխ 1.3.....6
6..Գլուխ 1.4.....6
7..Գլուխ 1.5.....7
8..Գլուխ 2.1.....8
9..Գլուխ 2.2.....9
10.Գլուխ 2.3.....11
11.Գլուխ 2.4.....11
12.Գլուխ 2.5.....11
13.Գլուխ 2.6.....12
14.Եզրակացություն.....15
15.Օգտագործված գրականության ցանկ.....16

1.Ներածություն

Ժամանակ առ ժամանակ կրթության բնագավառում տեղի ունեցող փոփոխությունները նպաստում են կրթության որակի բարելավմանը:Նորագույն մեթոդների ուսումնառությունը,կիրառումը և վերապատրաստավորումը մանկավարժին օգնում է նոր մեթոլոգիական մոտեցում ցուցաբերել աշխատանքի ընթացքում:Ժամանակակից ուսուցման մեթոդներից առանձնահատուկ եմ վերաբերվում ինտեգրված և համալիր պարապմունքներին:

Ինտեգրման թեմայի նպատակը՝ ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ.

•Նպատակ

•Բովանդակություն

•Ուսուցման մեթոդ

•Վերջնարդյունք

Տարբեր է տևողությունը անհրաժեշտ է՝ երկու կամ երեք ժամ մեկ պարապմունքի մեջ:Ինտեգրված պարապմունքը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդների կիրառում:Պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում կարծում եմ երեխային տալիս է պարզ պատկերացում շրջապատի մասին,որտեղ նա ապրում է:Ընկալվում է իր բազմազանությամբ ապահովելով երեխայի հետաքրքրությունը և ամբողջական պատկերացումը տարբեր օբյեկտների և երևույթների միջև:

Ինտեգրման պարապմունքը համալրվում է թեմատիկ պարապմունքի օժանդակությամբ:

Բարդ առաջադրանքները լուծվում են համալիր ծրագրում,իսկ ինտեգրվածում՝ մեկ խնդիր լուծում է,տարբեր տեսակի գործողություններ կիրառելով:

Տարատարիքային խմբում ինտեգրված պարապմունքը իրականացվում է ժամանակավոր խմբերի տարանջատումով:

Ուսուցման օգտակարության աստիճանը կախված է դաստիարակի պատրաստակամությամբ:

Օգտվելով և ուսումնասիրելով մի շարք գրականություն:

Վերապատրաստումը օնլայն դասընթացների միջոցով:

Ուսումնասիրություն կատարելով համացանցում:

Կազմակերպել հանդիպումներ փորձի փոխանակման նպատակով՝ տարբեր նախակրթարաններ և մանկապարտեզներ:

Գլուխ 1.Նախադպրոցական կրթություն

1.1 Նախադպրոցական կրթության արտացոլումը

Անհրաժեշտ է առաջնորդվել Մարի Մոնտեսորի հեղինակային խոսքերով:

<<Երեխան սովորում է այն,ինչ իրեն շրջապատում է:

Եթե երեխային շատ գովեք,նա կսովորի գնահատել:Երեխային հաճախ քաջալերելու դեպքում նա սովորում է լինել ավելի ինքնավստահ:

Եթե երեխան ապրում է ընկերական միջավայրում և իրեն կարևոր է զգում նա այս աշխարհում միշտ սեր է գտնում:Միշտ լսեք և պատասխանեք երեխային,երբ նա դիմում է Ձեզ:

Երեխայի հետ շփվելիս եղեք որքան հնարավոր է դրական:Առաջարկեք նրան լավագույնը,ինչպես նա կա աշխարհում:>>

Մտերմիկ հարաբերություն ստեղծելով փոքրիկի հետ ձևավորվում է առողջ **հոգեբանություն**, **սեր** և **վստահություն**:

1.2 Դաստիարակի դերը գործունեության ընթացքում

Հավասարվելով երեխային դաստիարակը դառնում է երեխայի մտերիմ ընկերը,ծնողը և կեսը:Ընտանիքից բաժանվելով փորձում է երկրորդ մայր գտնել նոր միջավայրում՝ մանկապարտեզում ո՞վ հոգ կտանի նրա համար և կօգնի հարմարվել:

Դաստիարակը պետք է չմոռանա նախադպրոցական տարիքի երեխաների հոգեկան զարգացման առանձնահատկությունները:

•Գիտի նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման առանձնահատկությունները տարիքային տարբեր փուլերում:

•Կարողանում է սաների տարիքային ընդհանուր բնութագրին համապատասխան իրականացնել ուսումնադաստիարակչական գործընթաց:Կարողանում է ներկայացնել և կիրառել սաների ճանաչողական հետաքրքրությունների բացահայտման ու զարգացման ուղղված մեթոդները:

•Կարողանում է պլանավորել և իրականացնել խումբն արդյունավետ կառավարելու որակական հոգեբանական մթնոլորտ ապահովելու և սաների հետ արդյունավետ հաղորդակցվելու գործողությունները:

1.3 Նախադպրոցական կրթության բովանդակությունը

Այն ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1.շարժողական ոլորտ

2.խոսքի զարգացում

3.հուզական, անձնային, սոցիալական, իրավական զարգացում

4.իմացական ոլորտ

5.ինքնասպասարկում և անվտանգություն

6.վերաբերմունք սովորելու նկատմամբ:

Այս ոլորտներն արտահայտվում են չափորոշչում:

1.4 Նպատակները

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակներն են.

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

ա. [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

բ. [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□□□□
□□ □□□□ □□□□ □ □ □□□□ □□□□ □□ □□□□ □□□□□ □□ □ □□ □□ □□□□□□□□□□□□□
□□□□□□□□□ □□ □□ □ □ □□ □□□□ □□□□□□ □□ □□□□□□□□ □ □□□□□□□□□□□,
□□ □□□□□□□□ □□ □□□□□□□ □ □□□□□□-□□ □□□□□□□□□□□□□□□□

1.5Թեմատիկ ինտեգրված ուսուցումը տարատարիքային խմբում

Խառը խմբերի օրվա ռեժիմն իր ներգործության հնարավորություններով պետք է նպաստի եւ ապահովի բոլոր երեխաների ներդաշնակ,համակողմանի զարգացումը: Տարատարիք (խառը) խմբավորումները նպաստավոր են երեխաների սոցիալական եւ ճանաչողական զարգացման տեսանկյունից: Այդ փորձին օժանդակելու նպատակով հիմնվել եմ Վիգոտսկու՝ «զարգացման մերձավոր գոտու» տեսության վրա,ըստ որի մեծահասակները եւ ավելի իրազեկ հասակա կիցները կարող են օժանդակել,որ երեխան իր իմացածից ու կարողացածից մի քիչ ավելին կարողանա անել, եւ որ ճանաչողական զարգացման լավագույն խթանը երեխաներին այնպիսի առաջադրանք տալն է, որը մի փոքր գերազանցում է նրանց զարգացման ներկա մակարդակը:
Տարատարիք խմբերն առավելություններ ունեն նաեւ ավելի փորձառու երեխաների համար: Դրանք բարելավում են ավագ երեխաների ինքնակարգավորման հմտությունները: Ապահովելով խմբային կանոնների կիրառումը եւ օգնելով կրտսերներին՝ ավագ երեխաներն ավելի լավ են դատում սեփական վարքի մասին եւ ավելի լավ են կարգավորում այն:
Վաղ մանկական տարիքի ծրագրերում տարատարիք փոխազդեցության օգուտները կախված են նաեւ խմբային միջավայրից եւ
դաստիարակի ապահոված կառույցների քանակից: Օրինակ,
հասակակիցների կողմից զգալի սատարում եւ սոցիալամետ վարք էր արձանագրվել, երբ դաստիարակը նպատակաուղղված առաջադրանքներով գործունեության մի քանի միջավայր էր ապահովել՝ թույլ տալով երեխաներին ինքնուրույն որոշել, թե ու՞մ հետ աշխատեն եւ ինչպե՞ս հասնեն առաջադրված նպատակ ներին:
Ընդհանուր առմամբ, տարատարիք խմբերը կարող են խիստ հարուստ սոցիալական փորձառություն ապահովել նախադպրոցական տարիքի երեխաների համար: Սակայն տարատարիք փոխազդեցության օգտակարության աստիճանը կախված է նրանից, թե որքան լավ են դաս տիարակները կազմակերպում երեխաների խմբային գործունեությունը և օժանդակում դրանց:

Գլուխ 2. Թեմատիկ ինտեգրված ուսուցման պլանավորում

2.1 Գուսի մեթոդ

Նախագծի կամ ուսումնասիրության պլանավորման օգտակար միջոցներից մեկը ԳՈՒՍ (KWL) մոդելի օգտագործումն է,որը երեք հարց է առաջադրում.
1. Ի՞նչ գիտենք: (Գ)
2. Ի՞նչ ենք ուզում իմանալ: (Ու)
3. Ի՞նչ սովորեցինք: (Ս)

Սահմանում ենք նպատակները

-կրթական/իմացություն

-զարգացնող/կարողություն

-դաստիարակչական/սոցիալական հմտություններ

ԳՈՒՍ մեթոդով աշխատում ենք՝ պարզելու համար, թե ինչ գիտեն երեխաները, և հետաքրքրություն ենք առաջացնում տվյալ թեմայի վերաբերյալ:

Գիտենք	Ուզում ենք իմանալ	Սովորեցինք
1. 2.	1. 2.	1. 2.
	Ի՞նչպես իմանանք 1. 2.	

Թեմային վերաբերող նյութերի հավաքում

-Հայտարարություն ծնողներին՝ առաջիկա թեմայի վերաբերյալ:

-Անհրաժեշտ գրականության ձեռքբերում:

-Դիդակտիկ պարագաների ստեղծում աշխատելու համար նախատեսված ուսումմնախաղային նյութերի ձեռքբերում կամ ստեղծում:

2.2 Մեթոդի կիրառումը

Թեմա՝ <<Եղևնի>>

Սկզբում նախաձեռնում ենք քննարկում՝ առաջարկելով մտքեր փոխանակել այն մասին,թե իրենք արդեն ինչ գիտեն որոշակի առարկայի, երեւույթի կամ թեմայի մասին: Օրինակ, եթե քննարկվող թեման եղևնին է, կարող ենք այսպիսի հարցեր առաջարկել. «Ի՞նչով են տարբերվում մյուս ծառերից ձմռանը»,«Ի՞նչպես են աճում եղևնիները»,«Որտե՞ղ են աճում եղևնիները>>,<<Ինչու՞ է կոչվում տոնածառ>> գիտեն, երբ են դնում տոնածառը և ինչու՞:Երբ երեխաները սկսում են պատասխանել, մանկավարժը նրանց պատասխանները գրում է մեծ թերթի վրա, որպեսզի բոլորը տեսնեն: Կարեւոր է, որ յուրաքանչյուր երեխայի անուն նշվի իր մեկնաբանության կողքին եւ, որ բոլոր մեկնաբանությունները նշված լինեն:Երկրորդ հարցը հետեւյալն է. «Ի՞նչ եք ուզում իմանալ տոնածառի մասին»: Կրկին գրառում ենք պատասխանները:Հարցերի պատասխաններով է որոշվելու ծրագրի բովանդակությունը: Բոլոր հարցերը գրառվում են՝ անկախ այն բանից, թե որքան անմիտ կամ անտրամաբանական կարող են թվալ: Դրանից հետո հարցնում ենք. «Ինչպե՞ս կարող ենք գտնել
մեր հարցերի պատասխանները»:Այնուհետեւ երեխաների առաջարկները կանոնակարգում եւ դարձնում ենք տրամաբանական ուսումնական ծրագիր:

Աշխատանքները կարող են ներառել հետեւյալը.

• Այցելել եղևնիների պուրակ եւ արձանագրել այն, թե ինչպիսի հատկանիշներ ունի եւ այլն:

•Հարցազրույց վարել պուրակի պահակների հետ՝ դիմելով պուրակում գտնվող որեւէ մարդու, կամ մանկապարտեզ հրավիրել պուրակում աշխատող որեւէ բարեկամի, հարեւանի կամ այլ ծանոթի եւ զրուցել. հարցնել, թե ինչպես են խնամում եղևնիները, որտեղ են պահում,չորացած ճյուղերը եւ այլն:

•Համացանցից օգտվել՝ տարբեր նյութեր գտնելու համար եղևնիների մասին, տեսանյութեր, լուսանկարներ եւ ընդհանուր տեղեկություններ ձեռք բերելու համար:

•Ուսումնասիրել, թե ինչպես են կարող վաճառել բնական տոնածառները:

•Հարցազրույց վարել իրենց ընտանիքի անդամների հետ այն մասին, թե ինչպես են նրանք ընտրում, ամանորի տոնածառը՝բնական թե արհեստական:

•Գծապատկերներ ստեղծել եւ ներգրավել երեխաներին մաթեմատիկական այլ աշխատանքներում, ինչպիսիք են գործողությունները՝ կապված շուկայում եղած տարբեր տիպի կրպակների տեսակների ու քանակի հետ:

•Քարտեզների վրա նշել այն տեղերը, որտեղից բերում են եղևնիները:

•Պատմվածքներ գրել եղեվնիներեռի պուրակի մասին այնտեղ աշխատող մարդկանց եւ նրանց ապրանքների մասին:

•Ուսումնասիրել անտառատեսության որևէ գործ, որը ներկայացնում է եղևնիների աճեցմանը:
•Երեխաներին առաջարկել իրենց խմբասենյակում վերստեղծել
իրենց այցելած եղևնիների պուրակը:

Երրորդ բաղադրիչը՝ «Ի՞նչ սովորեցինք», հնարավորություն է տալիս երեխաներին եւ մանկավարժին խորհրդածել իրենց ուսումնառության մասին:

Երեխաները կշռադատման միջոցով հասկանում են, թե ինչպես իրենք նոր գիտելիքներ սովորեցին: Դա իր հերթին օգնում է,որպեսզի հետագայում կարողանան այդ ըմբռնումը կիրառել նաեւ այլ իրավիճակներում: Գործունեության տարբեր տեսակների վերլուծությունը կօգնի բարելավել հետագա նախագծերի որակը, քանի որ ավելի լավ կհասկանանք, թե գործունեության որ տեսակներն են առավելագույնս համապատասխանում երեխաների տարիքին, զարգացման մակարդակին եւ հետաքրքրություններին: Ինչպես նշվեց դիտարկման, արձանագրման եւ կշռադատման վերաբերյալ նախորդ գլխում, փաստաթղթավորման ծրագիրը կատարյալ հարթակ է՝սովորելու վերաբերյալ մտքերի ու գաղափարների փոխանակման համար ինչպես երեխաների, նրանց ընտանիքների, այնպես էլ (անհրաժեշտության դեպքում) ավելի լայն համայնքի հետ:
ԳՈՒՍ ռազմավարության օգտագործման պարագայում երեխաները հնարավորություն են ստանում մասնակից դառնալ պլանավորման գործընթացին: Պլանավորումը զարգացման տեսանկյունից կարեւոր հմտություն է երեխաների համար,անկախ այն բանից, թե ինչ ենք պլանավորում. ինչով զբաղվել օրվա ինչ-որ կարճ ժամանակահատվածում, թե պլանավորումը վերաբերում է իրենց հետաքրքրող ինչ-որ թեմայի մասին նոր,ավելի շատ բան սովորելուն: Խմբային պլանավորումը օգնում է երեխաներին ձեռք բերել նաեւ բանակցային հմտություններ եւ սովորել, թե ինչպես թիմի անդամ լինել:
Երեխաները կարող են նաեւ ընտրել, թե ինչպես են ցանկանում մասնակցել նախագծին: Կարող են ընտրել, թե որ հարցերը կցանկանային ուսումնասիրել, կամ որոնց պատասխանները ներկայացնել եւ/կամ ինչպես ներկայացնել դրանք: Նրանք նույնիսկ կարող են որոշել նորից ուսումնասիրել նույն թեման, այս անգամ՝ երեխաների այլ խմբի հետ, որ կարողանան վեր հանել տվյալ հարցերի վերաբերյալ տարբեր մոտեցումներ:Երեխաների ընտանիքները կարեւոր ռեսուրս են նյութերի, տեղեկատվության եւ նոր հմտությունների դասավանդման
համար, նրանց կարելի է ներգրավել նախագծի պլանավորմանն օգնելու գործում: Ընտանիքների համար սա եւս մեկ հնարավորություն է իրենց ավանդը ներդնելու երեխաների ուսումնառության նպատակների սահմանման հարցում, ինչպես նաեւ երեխայի տունն ու համայնքը ուսումնական միջավայր բերելու համար:
Նախագծային թեմաներ ընտրելու մեկ այլ կարեւոր մոտեցումն այն է, որ ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախագծային թեման կօգնի երեխաներին հասկանալ շրջապատի, միջավայրի բազմազանությունը, քանի որ երեխաները առնչվում են դրա հետ ամեն օր: Բազմազանությունն
ուսումնասիրելու համար պետք ընտրվեն այնպիսի թեմաներ, որոնք հետաքրքրում են երեխաների մեծամասնությանը: Այդ թեմաները կարող են դիտարկել բազմազանությունը տարբեր ժամանակշրջաններում եւ տարբեր սերունդների տեսանկյունից կամ աշխարհի տարբեր երկրներում ու մասերում: Թեմաները կարող են

վերաբերել.
•խաղալիքներին եւ խաղերին,
•հագուստին,
•տներին եւ կացարաններին,

•սննդին եւ ուտելու սպասքին,
•մարդկանց ճամփորդելու միջոցներին:
Այս տարիքում երեխաները սիրում են զգալ, որ իրենց գործողությունները կարող են որոշակի ազդեցություն ունենալ:Շրջակա միջավայրի եւ այլ մարդկանց նկատմաբ հոգատարություն եւ խնամք խրախուսող տարբեր տեսակի նախագծերում երեխաներին ներգրավելը հիանալի միջոց է այդ ամենն իրականացնելու համար: Նախագծերը, որոնցում երեխաները կարող են ներգրավվել, կարող են ներառել այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են՝ կարիքավոր երեխաների համար խաղալիքներ կամ հագուստ հավաքելը, տարեց մարդկանց նպատակային օգնություն ցուցաբերելը, ինչ-որ նյութերի վերամշակման համար կենտրոն ստեղծելը կամ համապատասխան թափոնների հավաքման միջոցով վերամշակման կենտրոնին օգնելը: Այսպիսի նախագծերում
երեխաներին ներգրավելով՝ մենք հարգում ենք ուրիշներին օգնելու եւ որոշակի արդյունք ապահովող իրական աշխատանքներին մասնակցելու երեխաների պահանջմունքը:Այն նաեւ օգնում է երեխաներին կարեկցանք դրսեւորել ուրիշների հանդեպ եւ միջոցներ ձեռնարկել ընդդեմ անհավասարության եւ ի
նպաստ սոցիալական արդարության: Նախագծերը խթանում են նաեւ, որ երեխաները մտածեն, թե ինչ կարող են իրենք անել,մտածել ծրագրի ընթացքում ծագած մարտահրավերների եւ խնդիրների, ինչպես նաեւ այն ազդեցության եւ արդյունքի մասին,որին հասել են ծրագրի արդյունքում: Այս տեսակի
գործողությունները նաեւ սերտ կապ են ստեղծում նախադպրոցական հաստատությունների եւ համայնքների միջեւ,որն օգնում է երեխաներին հասկանալ հասարակության մեջ իրենց մասնակցային դերը, ինչն էլ իր հերթին դրական ներգործություն է ունենում վաղ մանկության կրթության ծրագրերի վերաբերյալ ձեւավորվող հասարակական կարծիքի վրա:

2.3 Դրական փորձի օրինակ

Նախագիծ եկեղեցու բակում

Դարբասի մանկապարտեզի գործող խումբն այցելեց տեղի եկեղեցու բակ,որտեղ տնկած են մի շարք եղևնիներ:Սովորեցին թե ինչպես գեղեցիկ և մաքուր պետք է պահեն, խնամեն եկեղեցու բակ,որը, որպես ուսումնասիրության թեմա, ներառված էր իրենց ուսումնական ծրագրում:Այցի ընթացքում երեխաները նկատեցին տոնածառի շուրջ թափված կոները գետնին:Մի քանի երեխա կոները հավաքեցին և բերեցին մանկապարտեզ:
Նույն օրը խմբում քննարկման ժամանակ մի քանի երեխա նույնպես ասացին, որ ծնողների հետ այգում զբոսանքի ժամանակ հավաքել են այդ կոները: Սա հանգեցրեց քննարկումների այն մասին, թե ինչու՞ մարդիկ իրենց եկեղեցու բակի կոները չեն

հավաքում: Երեխաները որոշեցին, որ այդ մասին պետք է կանոն սահմանվի ե հետաքրքրվեցին, թե ում հետ պետք է խոսել:Երեխաները ասացին,որ այդ հարցը պետք է լուծի համայնքապետը:

2.4 Հիմնական գաղափարները

•Դաստիարակը օգտագործում է երեխաների հետաքրքրությունը՝
եկեղեցու բակը մաքրելու նախագիծ սկսելու համար, սակայն հետո ընդլայնում է այն՝ օգնելով երեխաներին հասկանալ ծնողների դերն ու գործընթացը ու նաեւ սովորել թե ինչպես կարելի է ակտիվ լինել սեփական համայնքում:
•Դաստիարակը անհատականացնում է տարբեր գործողություններ երեխաների համար եւ նրանց ընտրություն է տալիս այն հարցում,թե ինչ կցանկանային անել:
•Դաստիարակը օգտագործում է նախագիծը, որպեսզի երեխաները լինեն ակտիվ նոր միջավայրում;

2.5 Ուսումնական ծրագրի պարտադիր բովանդակության ընդլայնումը ինտեգրված հետազոտություններում

Երբեմն նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատող մանկավարժները ընտրություն չունեն այն հարցում, թե որ թեմաները ներառել կամ երբ ներառել իրենց պլաններում, քանի որ նրանցից պահանջվում է հետեւել որոշակի պլանի կամ ուսումնական ծրագրի: Պետական կամ տեղական ուսումնական ծրագրերով պահանջվող թեմաները երեխաների համար ավելի հետաքրքիր եւ բովանդակալից դարձնելու միջոցներից մեկը դրանք կապակցելն է ուսումնասիրության ավելի մեծ թեմատիկ միավորների հետ, որոնք կպարունակեն տեղեկություններ հենց իրենց՝ երեխաների մասին: Ուսումնառության թեմատիկ միավորը բովանդակությունը ինտեգրված ձեւով սովորելու եւս մեկ միջոց է,որը տեղի է ունենում թեմաների խորը հետազոտության միջոցով:Ինչպես նախագծերի դեպքում, այնպես էլ այս պարագայում երեխաները կարող են հարցեր բարձրացնել, որոնք ցանկանում են ուսումնասիրել եւ գտնել իրենց հարցերի պատասխանները:Ուսումնառության թեմատիկ միավորները նույնպես ունեն սկիզբ,հետազոտական մաս եւ ավարտ, որի ընթացքում երեխաները ցույց են տալիս, թե ինչ են իրենք սովորել: Թեմատիկ միավորների տարբերությունը նախագծերից այն է, որ դրանք ավելի շատ ուղղորդվում են մանկավարժի կողմից եւ հետամուտ են լինում նոր բովանդակության ձեռքբերմանը՝ նախապես պատրաստված հատուկ պլանի համաձայն: Նրանք հաճախ կենտրոնանում են բնագիտության եւ հասարակագիտական թեմաների վրա՝ միաժամանակ խթանելով հմտությունների ձեռքբերումը այլ բովանդակային ոլորտներում՝ լեզու, գրաճանաչություն, մաթեմատիկա, արվեստ, տեխնոլոգիա եւ այլն: Նրանք սովորում են հետեւյալ կերպ , որևէ հասկացության մասին արդեն ունեցած գիտելիքը կամ փորձառությունը նրանց մղում է հասկանալ, թե ինչպես է այն անդրադառնում այլ մարդկանց, իրերի եւ իրադարձություններ վրա:
Փոփոխությունների ուսումնասիրությունը կարող է ներառել,թե ինչ փոփոխություններ են տեղի ունենում երեխաների կյանքում:

Երեխաները հնարավորություն ունեն կիրառելու իրենց տարատեսակ հմտությունները, ներառյալ.
•մաթեմատիկայի հմտությունները՝ փոփոխություններն ուսումնասիրելով չափումների եւ գծապատկերների միջոցով,
•գեղարվեստական հմտությունները՝ փոփոխությունների վերաբերյալ ստեղծելով տարբեր արտահայտչամիջոցներով գործեր՝ նկար, պար, երգ, ներկայացում եւ այլն,
•լեզվի եւ գրականության հմտությունները՝ գրելով/թելադրելով պատմություններ եւ արձանագրելով իրենց դիտողությունները տեսածի եւ զգացածի վերաբերյալ:

2.6 Ուսումնական պլան

Կիրառել Գուսի մեթոդը
Տևողությունը՝5 դասաժամ
1.Թեմա՝ <<Եղևնի>>
Խոսքի զարգացում Խ Զ
Նպատակ՝
•զարգացնել կապակցված խոսքը
•սովորեցնել պատասխանել հարցերին,ինքնուրույն հարցեր տալ
•նկարագրել առարկան
•վերապատմել ընթերցված կամ ծանոթ փոքրիկ պատմվածքը

Ընթացքը
Քայլ I-սկսել խթանման փուլով
Սեղանին դնել փոքրիկ արկղ,արկղի մեջ թաքնված է տոնածառ:
Դաստիարակը ներկայացնում է.
-Այս ինչ գեղեցիկ կախարդական արկղ է,երևի ամանորի խորհրդանիշ է,կարող եք գուշակել, թե ինչ կարող է լինել:
Լսել բոլոր երեխաների պատասխանները:
-Ի՞նչ եք կարծում,որն է ամենացրտադիմացկուն ծառը:
Որտե՞ղ է աճում:
Ինչպիսի՞ տեսք ունի:
Մտագրոհի միջոցով պարզում ենք երեխաների պատկերացումները և գիտելիքները թեմայի վերաբերյալ:
Կիրառելով Գուսի օրենքը,փորձելով գտնել
Ի՞նչ գիտենք հարցի պատասխանը:

Քայլ II-իմաստի ընկալման փուլ

Գուշակել հանելուկը,խրախուսելով և ոգևորելով այն երեխային,ով արագ կողմնորոշվի և ճիշտ կպատասխանի:

Հանելուկ

Նա մի հսկա է՝ ոտքերը հողում,

Իր բարիքով է սրտեր ողողում

Միշտ դիմանում է վայրի հողմերին,

Իսկ երբ հուզվում է քամուց է դողում: ***/ԾԱՌ/***

Կանաչ հյուսք է, կանաչ շառաչ

Հպարտ աանգամ ձմռան առաջ,

Ողջ տարին է դալար մնում,

Ցրտից անգամ չունի հառաչ: ***/ԵՂԵՎՆԻ/***

Ֆիզկուլտդադար

•Ընթերցել Ղ. Աղայանի <<Ծառի Գանգատը>> փոքրիկ պատմվածքը

•Շարունակել ֆիլմի դիտումով՝ անտառը պատկերող փոքրիկ տեսաֆիլմ,որտեղ միայն եղևնիներ են,ֆիլմը կոչվում է <<Անտառի Եղևնին>>

Աշխատանքը հեղինակային է:

Այստեղ կիրառեցինք <<Ուզում եմ սովորել>> հարցի պատասխանը:

Քայլ III-կշռադատման փուլ

Այս փուլում ամփոփում ենք ամբողջ թեման:Ինտեգրվում են խմբում ամբողջ երեխաները,փորձում են ինքնուրույն հարց ու պատասխանի միջոցով բացահայտել իրենց սովորած և ընկալած թեմաները իրար փոխանցելով մտքեր ու պատկերացումներ:

Պարզեցինք ,թե կախարդական արկղում ինչ էր թաքնված:

Վերջնարդյունք՝ վերապատմել լսած պատմությունը, պահպանելով մայրենի լեզվի հնչյունների ճիշտ արտասանությունը և խոսքի քերականական կողմը:Հետաքրքրությամբ դիտել մանկական փոքրիկ տեսաֆիլմեր:

Կշռադատման փուլում ստանում ենք.<<Ինչ սովորեցի>> հարցի պատասխանը:

<u>Խաղ <<Եկեք իրար ողջունենք>></u>

Նպատակը՝ խթանել հաղորդակցումը,զարգացնել ուշադրությունը,շարժումների կորդինացիան,թուլացնել լարվածությունը:

Ինտեգրված պարապմունքը շարունակել նույն ծրագրային կառուցվածքով շաբաթական պարապմունքների տեղաբաշխման ցանկի համաձայն:

I.<u>ԽՁ</u>

II.<u>ԻՇԱ</u>

III.ՄՏՊ

IV.<u>ԿԿԱ</u>

V.<u>Ե</u>

VI.<u>Ֆ</u>

Եզրակացություն

Ելնելով իմ աշխատանքային փորձից և հետազոտական աշխատանքից հանգեցի այն եզրակացության,որ դաստիարակը պետք է ունենա նորարական մեթոդներ,ավելի հետաքրքիր և յուրօրինակ աշխատանքներ կատարելու համար:Անընդհատ պետք է վերապատրաստվել ինքնակրթվել,հետևել նոր օրենքների մշակմանը ԳԹԿ-ի կողմից:

Համոզվեցի,որ նախադպրոցական կրթուրյան հաստատությունում պետք է կիրառել ճիշտ մեթոդական մոտեցում:Միաժամանակ հարկավոր է սովորողների հետ պարբերաբար կատարել զարգացնող վարժություններ:Խաղերի միջոցով զարգանում են երեխայի խոսքը և կամային վարքը,խաղի ընթացքում երեխան զգում է իրեն լիարժեք խմբի անդամ:Երեխաների մեջ հաղթահարվում է սեփական անձի վերաբերմամբ լիարժեք զգացում:

Պետք է նախակրթարանները համլրված լինեն դիտակտիկ ինտեգրված առարկաներով և գրականությամբ:

Այս աշխատանքի միջոցով փորձեցի վերարտադրել,այս մեկ ամսվա ընթացքում ստացած գիտելիքները.<<Քայլ առ քայլ>> բարեգործական ծրագրի և պատրաստական դասընթացավարների կողմից:

Օգտագործված գրականության ցանկ

1.Նախադպրոցական միջին խմբի կրթական համալիր ծրագիրը հաստատելու մասին/Վահրամ Դումանյան

2.Նախաշավիղ 1.2016/Կարինե Թորոսյան

3.Նյութեր վերապատրաստման դասընթացից

4.Համացանցից